Գ2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ավտոմեքենաների պահպանման ծառայությունների
ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՄԱ-11/ 78 -2021

ք. Երևան «12» 02 2021թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից, և «ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների պահպանման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը **1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

գրանցումներ է կատարվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ էլեկտրոնային տեսքով: Գրանցումներն իրականացվում են հետևյալ տվյալների հիման վրա՝ գրանցման ամսաթիվ, գրանցման համար, գրանցման ենթակա անձի անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, անձնագրի տվյալներ, հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, գրանցման նպատակ, գրանցման ենթակա գույքի նկարագրություն, գրանցման ենթակա գործարքի բովանդակություն, գրանցման ենթակա գործարքի գումարը, գրանցման ենթակա գործարքի կողմերի տվյալներ, գրանցման ենթակա գործարքի հիմքերի նկարագրություն, գրանցման ենթակա գործարքի ամսաթիվ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ամսաթիվ, գրանցման ենթակա գործարքի գրանցման համար, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի նկարագրություն, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գտնվելու վայր, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատված արժեք, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման ամսաթիվ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման մեթոդ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման արդյունքներ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման հաշվետվության համար, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման հաշվետվության ամսաթիվ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման հաշվետվության գրանցման համար, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման հաշվետվության գրանցման ամսաթիվ, գրանցման ենթակա գործարքի գրանցման ենթակա գույքի գնահատման հաշվետվության

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Մալիշկա**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	**Արդշինբանկ ՓԲԸ**
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	**Հ/հ 24723001417400 10**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 01834959**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ա. Հարությունյան**

Հավելված N 1
«12» 02 2021թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏԼՏՀ-ԾԱՀ-11/73-2021 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	**ավտոմեքենաների պահպանման ծառայություններ** 50111170/4	**ավտոմեքենաների պահպանման ծառայություններ** /տես կցված Հավելված N 1.1-ում/	դրամ	1 500 000	1	ք.Երևան	20.12.2021թ.

ՀՀ դրամ

*****Տեխնիկական բնութագրի բացվածքը (իրականացվող ծառայությունների և օգտագործվող պահեստամասերի և այլ նյութական միջոցները) մեծ ծավալի պատճառով ներկայացված են հրավերին կից pdf(Հավելված 1.1) ֆայլով:**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված դետալների և ծառայության համար 6 ամիս կամ կիրառելի լինելու դեպքում՝ 15000կմ:
2. Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի:Հայտի թույլտվությունը ՀՀ ԱԱԾ ՏնտՎ կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:Առանձին դեպքերում ՀՀ ԱԱԾ ՏնտՎ կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և ՀՀ ԱԱԾ ՏնտՎ ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զննման ակտ կազմակերպության տնօրենի, ավտոմեքենայի վարորդի, ՀՀ ԱԱԾ ՏնտՎ ներկայացուցչի և ՀՀ ԱԱԾ ՏնտՎ 3-րդ բաժնի պետի ստորագրություններով և կնիքով, որից հետո՝ երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԱԱԾ ՏնտՎ 3-րդ բաժին: Ծառայությունը պետք է մատուցվի առավելագույնը 10 օրյա ժամկետում և գրավոր կամ բանավոր կերպով ծանուցվի այդ մասին, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ԱԱԾ ՏնտՎ 3-րդ բաժին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Մալիշկա**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	**Արդշինբանկ ՓԲԸ**
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	**Հ/հ 2472300141740010**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 01834959**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ա. Հարությունյան**

Հավելված N 2
«12» 02 2021թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏԼՏՀ-ՍՄԿ-11/78-2021 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**50111170/4**	**ավտոմեքենաների պահպանման ծառայություններ** /տես կցված Հավելված N 1.1-ում/	0	225000	225000	450000	600000	750000	975000	1125000	1425000	1425000	1425000	1500000	**1 500 000**

ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի

գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Մալիշկա
Արդշինբանկ ՓԲԸ

Հ/հ 2472300141740010
ՀՎՀՀ 01834959
Տնօրեն

Ա. Հարությունյան

Հ.Տ.

ազգանուն, անուն, հայրանուն

ղեկավարման

Ստորագրություն

Հ.Տ.

ազգանուն, անուն, հայրանուն

ղեկավարման

Ստորագրություն

Սույն արձանագրությունը կազմվեցավ հետևյալ անձանց ներկայությամբ՝ ընտրությունների հանձնաժողովի նախագահ՝ _____, անդամներ՝ _____, _____, _____ և _____ հանձնաժողովի քարտուղար՝ _____ հետևյալ օրակարգով՝

1. Ընտրությունների արդյունքների ամփոփում և ձայների հաշվարկ
2. Ընտրությունների արդյունքների հրապարակում

_____	_____
գլխավոր մասնագետ	գլխավոր մասնագետ
_____	_____
գլխավոր, գլխավոր մասնագետ	գլխավոր, գլխավոր մասնագետ
_____	_____
անունով	անունով

Հանձնեց

Ընդունեց

ՀԱՅՏ

Սույն արտադրանքի նկարագրությունը, պիտակները 2 է գծիկներով նշված տարրերի նկատմամբ, պիտակները չունեն գրանցման համար:

Ծառայության անվանումը	Արտադրանքի անվանումը	Ապրանքանիշը (կնշանակումը)

տրամադրվում է հետևյալ ապրանքանիշերի գրանցման դեպքում Կառավարությունը հետևյալ պայմանագրերի շրջանակներում հետևյալ ապրանքանիշերի գրանցման դեպքում

Սույն հայտագրի գործողությունը դադարեցվում է _____-ին հետևյալ պատճառներով՝

Սույն հայտագրի գործողությունը դադարեցվում է _____-ին կնքված N գծիկների դեմ՝ _____ թ.

Գործադիր տնօրեն՝ _____ Ղ. Ասատրյան, տնտեսագիտության թեկնածու (ստորագրություն)

Սույնով հաստատվում է, որ սույն փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը համապատասխանում է թղթային բնագրին